

ժամանակ շահեցնել յօղուտ նշանակուած հաստատութիւններէ:

Հոկտ. 11-ին Մայր Աթոռում հիւր էր Ռուսաց Վանայ փոխ հիւպատոս Ալէքսանդր Գրիգորիեւիչ Տումանսկին իւր ընտանիքով: Յարգելի պարոնը երեք օր հիւրասիրուելուց և Մայր Աթոռի հնութիւնները տեսնելուց յետոյ՝ անցաւ գէպի Վան՝ իւր պաշտօնատեղին:

Նորին Մեծութիւն Պարսից Արեղակնափայլ Նահի գալստեան առթիւ պատրաստութիւն տեսնելու համար Հոգևոր Տիրոջ հրամանով յանձնաժողովի անդամներ էին նշանակուած Արժ. Տեառք Ղևոնդ, Մխիթար, Տիրայր և Կորիւն վարդապետները:

Մեր միաբանակից Տ. Տիրայր վարդապետը խնայելով մեր տկարութեան և մեր գործը փոքր ինչ թեթևացնելու նպատակով սիրայօժար կերպով ինքնաբերաբար յանձն էր առել կազմել «Արարատ» հոկտ. և նախընթաց համարի «օտար եկեղեցիներ» բաժնի մեծ մասը: Արտանց շնորհակալութիւն ենք յայտնում ընկերական աջակցութեան համար և գէպից օգտուելով՝ ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում այս հետաքրքրական բաժնի վերայ:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Սեպտ. 30-ին սովորական շքով կատարուեցաւ Մայր Աթոռի հոգևոր ձեմարանի 26 ամեայ տարեդարձը: Շիրակից և հետաւոր կողմից եկած ուխտաւորների և երեանից եկած հիւրերի բազմութիւնը կենդանութիւն էր տալիս հանդիսին: Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը գլուխ ունենալով Հոգևոր Տիրոջ՝ խմբուած էր երջանկայիշատակ հիմ-

նադրի գերեզմանի շուրջը: Հոգեհանգստից յետոյ Բ. խարանի ուսանողներից երեք հոգի՝ Ա. Հայրապետից ուրար ստացան որպէս նշան թէ պատրաստուած են եկեղեցու սպասաւորութեան լուծն առնելու: Այնուհետև միաբանութիւնը և ուխտաւորների բազմութիւնը զիմեցին ձեմարանի հիւսիսային բակը: ձեմարանի ծախսը զարգարուած էր ճաշակով թարմ՝ ծաղիկներով: Միաբանութեան համար բազմութիւններ էին շարուած կիսաբոլոր. իսկ մէջտեղը կարմիր մահուղով ծածկուած ամբիոնի վերայ գեանդած էր հայրապետական աթոռը: Նորին Աթոռութեան տկարութեան պատճառով հանդիսադիր էր նշանակուած Գերապ. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս: ձեմարանի Արժ. Տեսուչը կարգաց իւր հրապարակային հաշուետուութիւնը, իսկ խումբը երգեց հ. Կովտաս վարդապետի զեկավարութեամբ պատշաճաւոր երգեր:

Երեկոյեան ըստ սովորականին դիանական—գրական երեկոյթ կար: Բարձրագոյն գպրոցների սովորութեան համաձայն՝ ձեմարանում ևս աւանդութիւն է դարձել տարեդարձի օրը գիտնական մի շարադրութիւն կարգալ: Այս անգամ՝ դասախօսը պ. Ա. Տիգրանեանցն էր, որ Հայոց նորագոյն եկեղեցական իրաւունքի մասին հետաքրքրական մի շարադրութիւն կարգաց: Ուսանողներից՝ Նահրապետան նկարագրեց հ. տեսչի առաջնորդութեամբ այս ամառ կատարած ճանապարհորդութեան ժամանակ հանդիպած հին երկաթագիր աւետարանները: Գրական երեկոյթից յետոյ՝ ուսուցչական խումբը՝ աշակերտների հետ ընտանեկան ընթերցելայնեց, ուր պատշաճ՝ ճառախօսութիւններ եղան կրթական գործի վերաբերութեամբ:

ՏԱՃԿԱՀԱՅՐ.

Գարագեօղեան կտակին այն տրամագրութիւնը, որով որբանոց մը պիտի կառուցուէր, այս պահուս նորէն կը զրաղեցնէ: Պատրիարքարանը, Կը լսենք

Թէ Ս. Պատրիարքը վերստին գիմումներ բերէ է կայս. կառավարութեան մօտ՝ վերոյիշեալ որբանոցին շինուելիք գետնին վերաբերեալ խնդիրներու կարգադրութեան համար: Ինչպէս յայտնի է, այս որբանոցը պիտի շինուի հանգուցեալ Տիգրան էֆ Գարակեօղեանի թողած գումարով: Կառակատար ունենալով Գարակեօղեան Գրիգոր էֆէնտին, որ ամէն պատրաստակամութիւն յայտնած է շինութեան սկսելու համար: պայմանաւ, որ որբանոցին համար ազգային սեփականութիւն եղած գետին մը ցոյց տրուի: օրովհետեւ շինութեան համար սահմանուած 5000 ոսկի գումարը թէ՛ գետին մը գնելու և թէ՛ շէնք մը շինելու չի բաւեր:

— Ամասիայից կգրեն. Մահաբի Խումար բարեպաշտուհին վերջերս ամէն ունեցածը՝ «Գոյիւ չափ զկեանս իւր» կտակած է տեղւոյն Ս. Թորոս եկեղեցիին: օրուն համար արժանացած է օրհնութեան գրի մը՝ Առաջ. Տեղապահին կողմէ: Իրբանոսեան եղբայրները, որոնք մանչ տղոց համար առևտրական վարժարան մը հաստատած են ու մինչև այսօր իրենց խնամքով կը պահեն: այս անգամ ալ 60—70 չափահաս աղջիկներու համար հաստատուն վարժարանի մը մատակարարութեան հոգը ստանձնենք են:

— Գահիրէից կգրեն. Տեղւոյս Սրբախնամ մարմինը, որ Արարկիրու ազգային որբանոցին մէջ 12 որբեր կը պահէ, անցեալ շաբթու երեսուն օմ: ոսկի ալ զրկեց Պատրիարքարան: Այդ մարմինը գործի սկսած է այս տարուայ մայիս 1-ին և ամբողջ մէկ տարուան թողակը վաճառուն ոսկի լրացուցած կըլլայ վերոյիշեալ երեսուն ոսկիով:

«Պետրոս էֆ. Վարապետեան այս տարի ալ քսան ոսկի զրկեց Արարկիրու առաջնորդարանը՝ իր հօրը կտակին համեմատ՝ անոր հիմնադրած Շահարօլ թաղի վարժարանին համար: Պատկին առթիւ ծագած դատը, որ հիմայ Ս. Բեդերսպուրկի տաճաններուն առջև հանուած է, եթէ ի նպաստ Վարապետեանի վճռուի, այդ քսան ոսկին պիտի հաշուի կտակեալ կայուածոց եկամուտին: հակառակ պարագային մէջ պիտի նկատուի բացէն նուէր մը:

— Արարկիրի առաջնորդ Մուշեղ վարդապետ Եուլիսի վերջին օրը թեմական այցելութեան ելաւ այն գիւղերուն: զորս երկու տարիէ ի վեր չէր կրցած այցելել անցեալ օգոստոսին Պոլիս մեկնելուն պատճառաւ: Իրեն կընկերանար քաղաքիս քահանայէրէն Տ. Վորիւն: Իր այցելած գիւղերուն մէջ (Ծագ, Հասկի, Կասնի, Բուշնա, Վաւք, Աղըն, Վաղշէն), կարգադրած է ընտանեկան անհատական ու եկեղեցական կարգ մը գործեր: ի մէջ այլոց Ծագ գիւղի եկեղեցւոյ արծաթեղբայրաց խնդիրը: Աղընի եկեղեցւոյն ու գարոցին նորոգութեան գործը: ևլն: Օգ. 22-ին քաղաք դարձաւ ձեռք

առնելու համար քաղաքիս ազգ. վարժարաններու անվերջանալի խնդիրը: որ ծնողաց անտարբերութեան ու թաղ. սնտուկի անկարողութեան պատճառաւ: միշտ դժուարութիւններու մատնուած է:

— Արարկիրի առաջնորդ Տ. Մուշեղ վարդ. Երեսելքի մէջ յայտնում է, թէ «Ի Գահիրէ պաշտօնավարող Արթ. Տ. Եղնիկ քահանայ Պալուսի, ի նպաստ Արարկիրի որբերուն և աղքատներուն, բարեսիրտարար յանձն առած էր ասկէ առաջ, եզրիպտոսի զանազան մասերուն մէջ կատարել հանգանակութիւն մը: օրուն մասնակցած էին ձիպութիւն ազգայիններէն ալ: Իր հանգանակութեան արդիւնքը եղող 20 օմ: ոսկին երեք անգամով մեզ զրկած ըլլալով, այդ գումարը յանձնեցինք պատկանեալ խորհրդոց ի բարւոք գործածութիւն»:

— Բարիզի Հայոց մատուռը կերեալ թէ վերջնապէս պիտի շինուի մօտերս: Գանի մը ռուսահայ բարեսէր ազգայիններ, որոնք որբանոց մը գործին մէջ ալ կարեւոր մասնակցութիւն մը ունեցած են, իրենք ստանձնենք են մատուռին շինութեան բովանդակ ծախքը: Հիմայ յարմար գետին մը կփնտուի եղեր շէնքին կառուցման համար:

— Կըլսենք թէ Տ. Ղևոնդ եպիսկոպոս ձեռնարկեր է Երուսաղէմի Աթոռին պատրիարքներու պատմութիւնը պատրաստելու:

— Նպաստից յանձնաժողովը 12 Սեպտ. զբաղեցաւ գաւառներէ եկած կարօտութեանց և որբանոցներու վերաբերեալ տեղեկագիրներով և խորհրդակցեցաւ նպաստից անրուականութեան և կարօտութեանց գիմումներու վրայ: Մասնաւորաբար նկատողութեան առաւ Տիմրիկի առաջն. տեղապահին կողմէ վիճակին մէջ տարադատգործութեան արհեստը տարածելով ապրուստի նոր միջոց մը հայթայթելու համար եղած նպաստի խնդրանքը: և որոշեց առ այժմ տասը յեղիւսն հաստատել հոն: պայմանաւ որ երեք անձերու երաշխաւորութեան տակ գտնուի գործը: և Սերաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոս պէտք եղած հսկողութիւնը ընէ գործին յաջողութիւնը ապահովելու համար:

— Չարսանձագի առաջնորդական տեղապահը գրած է Պատրիարքարանի թէ Խողաթի, Բէրրիի և Մեծկերտի գիւղական վարժարանները վերաբացուեր են:

— Գանի մը գիւղական նոր դպրոցներ բանալու համար ասկէ առաջ խնդրանք եղած էր նպաստից Եանձնաժողովին: Միւս կողմէ ալ, այլ և այլ գաւառներէ ու մասնաւորաբար Մուշէն կարօտութեան գիրեր և նպաստի խնդրանք հասած ըլլալուն, նպաստից Եանձնաժողովը որոշեց, առ այժմ յետաձգել վերոյիշեալ գիւղական վարժարաններու բացման խնդիրը:

— Ամասիայէն կը գրեն մեզ սեպտ. 7 թուով:— Սեպտ. 2, շաբաթ օրը գումարուեցաւ Ս. Յակոբ

եկեղեցւոյ մէջ Գաւառ. Ժողովրդի որ լսեց առաջն. Տեղապահ Ս. Հօր միամեայ պաշտօնավարութեան համարատուութիւնը և առաջարկութիւնը առաջնորդ ընտրելու:

— Ս. Պատրիարքը Թեյեան և Մելիքեան էփեմերու հետ այցելեց ազգային հիւանդանոցը որբերու ուսումնական արհեստական վիճակը աչքէ անցնելով, կարգադրեց, որ արհեստական ծիւղերու մէջ որբերու թիւը աւելնայ և ասոնք մինչև կէս օր ուսման և կէս օրէն յետոյ արհեստի հետևին միջոցեմ հիմա շարաթը 6 ժամ միայն ուսման կը հետևին, Մանաւորապէս յանձնարարուելը է որ սկիզբի թղթի աշխատանքին մէջ որբերու թիւը աւելցուի: Ս. Պատրիարքը այցելեց նաև Հիւանդանոցի զանազան յարկերը:

— Բարիդի արուեստահանդէսին օսմանեան բաժնին մէջ ելեքտրական արօր մը ցուցադրած էր Պօղոս փաշայ Նուպար, որ արծաթ շքադրամ մը ստացած է այս անգամ: Քրանսական գիտական և երկրագործական թերթերը յօդուածներ նուիրած են Հայ մեքենագէտին այս աշխատութեան նկատմամբ, որ իր տեսակին մէջ լաւագոյնն է, ինչպէս կապալուցանեն եղած փորձերը և քննութիւնները: Այդ թերթերը կը խօսին նաև Պօղոս փաշայի գիտական կարողութեան վրայ և կը բացատրեն իր այս գիտին արհեստական և գիտական կարեւորութիւնը:

— Մարզուանի վանքին Միաբաններէն Նիկողայոս Ա. Քրանկիւլեան Բալուի առաջն. տեղապահ կարգուած է:

— Խառն ժողովը գումարուեցաւ Սեպտ. 5ին Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարքին և ատենապետութեամբ Ստեփան փաշա Արսլանեանի և հետեւալ կարգադրութիւններն ըրաւ.

Մշոյ առաջն. տեղապահ Բարկէն Ա. հրաժարական տուած ըլլալով: Ս. Պատրիարքը յանձնարարած էր մնալ պաշտօնին մէջ, Ժողովը հաւանեցաւ այս կարգադրութեան և նոր տնօրինութիւն մը ընել աւելորդ համարեց — Գաղատիոյ առաջն. տեղապահ Եղնիկ Ա.ի հրաժարականը նկատելով, որ անձնական տկարութեանը պատճառաւ տրուած էր, հարկ դատեց ընդունիլ և Գաղատիոյ առաջն. տեղապահ կարգեց Վահան Ա. Յակոբեան: — Պարինի առաջն. տեղապահ Զաւէն, Երզնկայի Յովհաննէս Յակոբեան և Հապին Գարահիսարի Սմբատ Ա.ները նոյնպէս հրաժարական չըկած ըլլալով, անոնց մատուցած բարուր ծառայութիւններէն գոհ մնալով և անոնց ներկայութիւնը գտնուած վիճակուն մէջ օգտակար նկատելով, որոշեց գրել որ շարունակեն իրենց պաշտօնը: — Ահմայ առաջն. տեղապահ Արիստակէս Ա. ասկէ առաջ հրաժարական մատուցած ըլլալուն, Ս. Պատրիարք Հայրը յանձնարարած էր իրեն Երուսաղէմ

երթալ: Ժողովը սոյն կարգադրութիւնը ընդունելով՝ Արարիկի Եռաջնորդ Մուշեղ Ա.ին յանձնեց առժամարար Արարիկի վիճակը, որպէս զի անձամբ այցելութիւն տալով՝ հոգուէ Ահմայ վիճակի ժողովուրդին: — Ազերդի առաջն. Տեղապահ Փառէն Ա.ի հրաժարականը ընդունեց և Բգիի առաջն. Տեղապահ Վահրէճ Ա.ը Ազերդի Տեղապահ կարգելով, որոշեց Փառէն Ա.ը Բգիի առաջն. Տեղապահ կարգել: — Էտրնէի առաջն. Փոխանորդ Արսէն քահանայի և Ամասիոյ նորընտիր Եռաջնորդ Արիստակէս Ծ. Ա.ի ընտրութիւնները օրինաւոր գտնելով վաւերացուց:



ՀԱՅԵՒՈՐ ԱԶԳԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻ.

Մեր եկեղեցական անորոշ խնդիրներում մի տեղ էլ բռնում է հոգեւոր ազգակցութեան հարցը: Ժողովուրդն ու հոգեւորականութիւնը կամ աւելի լաւ ասել՝ հոգեւոր ազգակցական աստիճաններում պսակուողներն, պսակադիրն ու գործակալը անում են այն՝ ինչ որ կամենում են, ուշք չդարձնելով ընդհանուր արդիւններին՝ թէ այս պսակը չհաս է, մեղք է, չի կարելի ևլն ևլն:

Զարմանալին այն է՝ որ Լուսաւորչից մինչև այսօր ոչ մի ժողովական — եկեղեցական կանոն չկայ հոգեւոր ազգակցութեան խնդիրը որոշող և կարգի տակ ձգող, ունենք միմիայն մի քանի կաթուղիկոսական կարգադրութիւններ, որոնք բոլորովին մոռացութեան են տըրուած, թէ կանոնադիր կաթուղիկոսի օրով գործադրուած լինին այդ էլ հարց է: Շնորհալու կարգադրութիւնը վերաբերում է մարմնաւոր ազգակցութեան, որը պահանջում է 10 աստիճանի ամուսնութիւն: Արրահամ կաթուղիկոսի 1734 թուի կոնդակը սահմանեց մարմնական ազգակցութեան համար «10 ծիւղ», խնամութեան համար «5 ծիւղ», կնքաւորութեան համար «8 ծիւղ»: հետեւելով ոչ Սոխ ժողովին, ապա Յակոբ խրիմեցու և մեր բազմաթիւ ձեռագիր կանոնագրերին: Ներսէս Ե.ի կոնդակով թոյլատրուած է հոգեւոր ազգակցու-